

Ապրանքների և ծառայությունների ձեռք բերման

ք. Երևան

«---». «-----» 2011թ.

ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմը, հետագայում «Պատվիրատու» ի դեմս աշխատակազմի ղեկավար Կ.Իսախանյանի մի կողմից, և «Էն Տե Գրաֆիկս» ՍՊԸ-ն, հետագայում «Կատարող» ի դեմս տնօրեն Լ.Կուլպայանի, մյուս կողմից, հետագայում «Կողմեր», գործելով իրենց կանոնադրությունների հիման վրա, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Համաձայն սույն պայմանագրի Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին հանձնել և/կամ մատուցել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները և/կամ ծառայությունները /այսուհետ՝ Ապրանքներ և Ծառայություններ/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել և վճարել դրանց համար:

1.2 Ապրանքի մատակարարումն սկսվում է 2011 թվականի փետրվարից, և իրականացվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցին համապատասխան:

1.3 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

1.4 Ապրանքը ձեռք բերված են համարվում Պատվիրատուի կողմից հաշիվ ապրանքագրի ստորագրման պահից:

2. Ապրանքի գինը և վճարման կարգը

2.1 Սույն պայմանագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի գինը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է 164.0 հազար դրամ: Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության (ձև N 4) հիման վրա սույն պայմանագրի N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Կատարողը իրավունք ունի ստանալու սույն պայմանագրով սահմանված վճարները:

3.2. Կատարողը պարտավորվում է պատշաճ որակով և տեխնիկապես հնարավոր ամենակարճ ժամկետներում կատարել Պատվիրատուի պատվերը:

3.3. Եթե ապրանքների ընդունման ժամանակ հայտնաբերվում են թերություններ, ապա Պատվիրատուն իրավունք ունի պահանջել Կատարողից վերացնել այդ թերությունները վերջինիս հաշվին և չընդունել ապրանքները մինչև այդ թերությունների վերացումը:

4. Այլ Պայմաններ

4.1 Եթե առկա են արտակարգ իրավիճակներ, որոնք կարող են դասվել որպես անհաղթահարելի ուժ` (ֆորս մաժոր` տարերային աղետներ, և այլ) ապա դա կարող է հիմք հանդիսանալ կողմերին սույն պայմանագրով սահմանված ժամկետների խախտման համար:

4.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:

4.3 Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն լրացուցիչ համաձայնագրերի միջոցով:

4.4 Սույն պայմանագրով Կողմերի միջև ծագած վիճելի հարցերը լուծվում են բանակցությունների միջոցով: Երկկողմ համաձայնության չգալու դեպքում վիճելի հարցերը լուծվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

4.5 Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի իրավաբանական հասցեները

Պատվիրատու

ՀՀ տարածքային կառավարման
նախարարության աշխատակազմ
ք.Երևան, Կառավարական տուն 2
ՀՎՀՀ 02578338
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011003150
Հ/Հ 900011003168

Կատարող

«ԷՆ ՏԵ Գրաֆիկս» ՍՊԸ
ք.Երևան, Կուզնեցովի 8-72
ՀՎՀՀ 01552971
«Հայէկոնոմբանկ» ԿԵՆՈ. Ս/Ե
Հ/Հ 163308105077

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՏՆՕԲԵՆ

Կ. Իսախանյան

Լ. Կուպայան

(ստորագրություն)

(ստորագրություն)